

Սույն փաստաթուղթը միայն տեղեկատվական գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՍԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՏՐՎԱՐԻ 16-Ի 98/5/ԵՀ
ՀՐԱՀԱՆԳ**

**Որակավորման ստացման վայրի անդամ պետությունից բացի որևէ այլ անդամ պետությունում
մշտական հիմունքներով փաստաբանական գործունեության իրականացումը դյուրացնելու մասին
(ՊՏ, L 77, 14.03.1998թ., էջ 36)**

<u>Փոփոխված՝</u>	Պաշտոնական տեղեկագիր		
	Համար	Էջ	ամսաթիվ
Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 20–ի թիվ 2006/100/ԵՀ հրահանգ	L 363	141	20.12. 2006թ.
<u>Փոփոխված՝</u> Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի Հանրապետության, Կիպրոսի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Հունգարիայի Հանրապետության, Մալթայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության, Սլովենիայի Հանրապետության և Սլովակիայի Հանրապետության անդամակցության պայմաններին և այն Պայմանագրերում կատարվող փոփոխություններին վերաբերող ակտով, որոնցով հիմնադրվում է Եվրոպական միությունը:	L 236	33	23.09.2003թ.

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՍԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՏՐՎԱՐԻ 16-Ի 98/5/ԵՀ
ՀՐԱՀԱՆԳ**

**Որակավորման ստացման վայրի անդամ պետությունից բացի որևէ այլ անդամ պետությունում
մշտական հիմունքներով փաստաբանական գործունեության իրականացումը դյուրացնելու մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՍԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 49-րդ հոդվածը, հոդված 57(1)-ը և հոդված 57(2)-ի առաջին և երրորդ նախադասությունները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը ⁽¹⁾,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը ⁽²⁾,

գործելով Պայմանագրի 189-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն ⁽³⁾,

- 1) քանի որ Պայմանագրի 7-րդ հոդվածի համաձայն ներքին շուկան պետք է լինի առանց ներքին սահմանների տարածք, և քանի որ Պայմանագրի հոդված 3(գ)-ի համաձայն անդամ պետությունների միջև անձանց և ծառայությունների ազատ տեղաշարժի խոչընդոտների վերացումը Համայնքի նպատակներից մեկն է, և քանի որ անդամ պետությունների քաղաքացիների համար դա, մասնավորապես, նշանակում է թե՛ որպես ինքնազբաղված անձ, և թե՛ որպես վարձու աշխատող որակավորման ստացման վայրի անդամ պետությունից բացի որևէ այլ անդամ պետությունում մասնագիտական գործունեություն իրականացնելու հնարավորություն,
- 2) քանի որ «Առնվազն երեք տարի տևողությամբ մասնագիտական կրթության և վերապատրաստման ավարտին տրվող բարձրագույն կրթության դիպլոմների ճանաչման ընդհանուր համակարգի մասին» Խորհրդի 1988 թվականի դեկտեմբերի 21-ի 89/48/ԵՏՀ հրահանգի(4) համաձայն մեկ անդամ պետությունում համապատասխան որակավորում ստացած իրավաբանը կարող է արդեն պահանջել իր դիպլոմի ճանաչումը մեկ այլ անդամ պետությունում՝ այդ անդամ պետությունում հիմնադրվելու և տվյալ պետությունում կիրառվող մասնագիտական կոչումով փաստաբանական գործունեություն իրականացնելու համար, և քանի որ թիվ 89/48/ԵՏՀ հրահանգի նպատակն է ապահովել, որպեսզի ընդունող անդամ պետությունում փաստաբանն ինտեգրվի մասնագիտությանը, և Հրահանգը նպատակ չի հետապնդում ոչ փոփոխել այդ պետությունում այդ մասնագիտությունը կարգավորող կանոնները, ոչ էլ փաստաբանին դուրս թողնել այդ կանոնների գործողության ոլորտից,
- 3) քանի որ որոշ փաստաբաններ կարող են արագորեն ինտեգրվել մասնագիտությանը ընդունող անդամ պետությունում՝ մասնավորապես անցնելով թիվ 89/48/ԵՏՀ հրահանգով նախատեսվող կարողությունների ստուգում, ապա համապատասխան որակավորում ունեցող մյուս փաստաբանները պետք է հնարավորություն ունենան հասնելու նման ինտեգրման ընդունող անդամ պետությունում իրենց ծագման երկրի մասնագիտական կոչումով մասնագիտական գործունեություն իրականացնելուց որոշակի ժամանակահատված հետո կամ էլ շարունակելու իրենց մասնագիտական գործունեությունը ծագման երկրի մասնագիտական կոչումներով,

⁽¹⁾ ՊՏ, C 128, 24.05. 1995թ., էջ 6 և ՊՏ, C 355, 25. 11. 1996թ., էջ 19.

⁽²⁾ ՊՏ, C 256, 2. 10. 1995թ., էջ 14.

⁽³⁾ 1997 թվականի հունիսի 19-ի Եվրոպական պառլամենտի եզրակացություն (ՊՏ, C 198, 8.07. 1996թ., էջ 85), 1997 թվականի հունիսի 24-ի Խորհրդի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ, C 297, 29.09. 1997թ., էջ 6), 1997 թվականի նոյեմբերի 19-ի Եվրոպական պառլամենտի որոշում (1997 թվականի դեկտեմբերի 15-ի Խորհրդի որոշում):

⁽⁴⁾ ՊՏ, L 19, 24. 01. 1989թ., էջ 16.

- 4) քանի որ այդ ժամանակահատվածի ավարտին փաստաբանը պետք է կարողանա ինտեգրվել մասնագիտությանը ընդունող անդամ պետությունում՝ այդ անդամ պետությունում մասնագիտական փորձի առկայությունն ստուգելուց հետո,
- 5) քանի որ այս ուղղությամբ գործողությունը հենց Համայնքի մակարդակով արդարացվում է ոչ միայն այն պատճառով, որ, դիպումների ճանաչման համար ընդհանուր համակարգի հետ համեմատած, այն փաստաբանների համար առավել հեշտ միջոցներ է նախատեսում, որոնց օգնությամբ նրանք կկարողանան ինտեգրվել մասնագիտությանը ընդունող անդամ պետությունում, այլ նաև որովհետև, հնարավորություն տալով փաստաբաններին մշտական հիմունքներով գործունեություն իրականացնելու ընդունող պետությունում իրենց ծագման երկրի մասնագիտական կոչումով, դրանով իսկ բավարարում է իրավական ծառայություններից այն օգտվողների կարիքները, ովքեր, մասնավորապես, ներքին շուկայից բխող առևտրային հոսքերի մեծացող ծավալների պատճառով խորհրդատվության կարիք ունեն անդրսահմանային գործարքներ կատարելիս, որտեղ միջազգային իրավունքը, Համայնքի իրավունքը և ներքին օրենքները հաճախ մասամբ համընկնում են,
- 6) քանի որ գործողությունը Համայնքի մակարդակով արդարացվում է, որովհետև ընդամենը մի քանի անդամ պետություններ են արդեն իրենց տարածքում թույլ տալիս այլ անդամ պետություններից փաստաբաններին իրականացնել փաստաբանական գործունեություն՝ ծառայություններ մատուցելով իրենց ծագման երկրի մասնագիտական կոչումով, և քանի որ այն անդամ պետությունում, որտեղ այդ հնարավորությունն այնուհանդերձ առկա է, գործունեության ոլորտին և իրավասու մարմիններում գրանցվելու պարտավորությանն առնչվող գործնական մանրամասները զգալիորեն տարբերվում են, և քանի որ իրավիճակների նման բազմազանությունը հանգեցնում է անդամ պետությունների փաստաբանների միջև անհավասար մրցակցությանը և մրցակցության խաթարմանը և խոչընդոտ է ազատ տեղաշարժին, և քանի որ ծագման երկրի մասնագիտական կոչումներից բացի այլ կոչումներով գործունեություն իրականացնող փաստաբանների կողմից այդ մասնագիտական գործունեության իրականացումը կարգավորող պայմանները սահմանող հրահանգն է միայն, որ կարող է լուծում տալ այս դժվարություններին և հավասար հնարավորություններ ընձեռել բոլոր անդամ պետությունների փաստաբաններին և այդ փաստաբանական ծառայություններից օգտվողներին,
- 7) քանի որ, հավատարիմ մնալով իր նպատակին, սույն Հրահանգը չի սահմանում զուտ ներքին իրավիճակներին վերաբերող որևէ կանոն, և եթե այն իր ազդեցությունն է ունենում իրավաբանական մասնագիտությունը կարգավորող ազգային կանոնների վրա, ապա նման կերպ վարվում է այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր նպատակն արդյունավետ իրականացնելու համար, և քանի որ այն չի խախտում, մասնավորապես, ընդունող անդամ պետությունում կիրառվող մասնագիտական կոչումով փաստաբանության մատչելիությունը և փաստաբանական գործունեությունը կարգավորող ազգային օրենսդրությունը,
- 8) քանի որ սույն Հրահանգով նախատեսված փաստաբանները պետք է գրանցվեն ընդունող անդամ պետության իրավասու մարմնում, որպեսզի այդ մարմինը համոզվի, որ նրանք համապատասխանում են տվյալ պետությունում գործող մասնագիտական վարքագծի կանոններին, և քանի որ իրավասությունների վերաբերյալ նման գրանցման արդյունքները և դատարանների տեսակներն ու աստիճանները, որտեղ փաստաբանները կարող են իրենց գործունեությունը իրականացնել, որոշվում են ընդունող անդամ պետությունում փաստաբանների նկատմամբ կիրառվող օրենսդրությամբ,
- 9) քանի որ այն փաստաբանները, որոնք չեն ինտեգրվել մասնագիտությանը ընդունող անդամ պետությունում, պետք է գործունեություն իրականացնեն այդ պետությունում իրենց ծագման երկրի մասնագիտական կոչումով՝ ապահովելու, որպեսզի ծառայություններից օգտվողներն իրազեկ լինեն և տարբերակեն այդ փաստաբաններին և ընդունող անդամ պետության փաստաբաններին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են այնտեղ կիրառվող մասնագիտական կոչումներով,

- 10) քանի որ սույն Հրահանգով նախատեսված փաստաբաններին պետք է թույլատրվի փաստաբանական խորհրդատվություն մատուցել, մասնավորապես, իրենց ծագման անդամ պետությունների իրավունքի, Համայնքի իրավունքի, միջազգային իրավունքի և ընդունող անդամ պետության իրավունքի շուրջ, և քանի որ դա արդեն իսկ թույլատրվում է Խորհրդի 1977 թվականի մարտի 22-ի թիվ 77/249/ԵՏՀ հրահանգի շրջանակներում՝ նպաստելու փաստաբանների կողմից ծառայություններ մատուցելու ազատության իրականացմանը ⁽¹⁾, և քանի որ, այնուհանդերձ, թիվ 77/249/ԵՏՀ հրահանգի համաձայն դրույթ պետք է նախատեսվի Միացյալ Թագավորությունում և Իռլանդիայում իրենց ծագման երկրում ընդունված մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանների գործունեությունից անշարժ գույքի սեփականության իրավունքի փոխանցման և ժառանգությանն առնչվող ոլորտների որոշակի պաշտոնական փաստաթղթերի կազմումը բացառելու մասով, և քանի որ սույն Հրահանգը ոչ մի կերպ չի ազդում այն դրույթների վրա, որոնց շրջանակներում յուրաքանչյուր անդամ պետությունում գործունեության որոշ տեսակներ վերապահված են իրավաբանական մասնագիտությունից բացի այլ մասնագիտություններին, և քանի որ ընդունող անդամ պետության հնարավորությունը վերաբերող թիվ 77/249/ԵՏՀ հրահանգի դրույթը, որով պահանջվում է, որպեսզի ծագման երկրում ընդունված մասնագիտական կոչումով գործող փաստաբանը դատավարական վարույթներում հաճախողին ներկայացնելիս կամ պաշտպանելիս համագործակցի տեղական փաստաբանի հետ, պետք է նաև ներառվի սույն Հրահանգում, և քանի որ այդ պահանջը պետք է մեկնաբանվի Եվրոպական համայնքների արդարադատության դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո, մասնավորապես, Հանձնաժողովն ընդդեմ Գերմանիայի 1988 թվականի փետրվարի 25-ի թիվ 427/85 վճռով ⁽²⁾,
- 11) քանի որ արդարադատության համակարգի բնականոն գործունեությունն ապահովելու համար անդամ պետությունները կարող են, հատուկ կանոնների հիման վրա, մասնագիտացած փաստաբաններին իրավունք վերապահել դիմելու իրենց վերին ատյանի դատարաններ՝ չխոչընդոտելով անհրաժեշտ պահանջները կատարող անդամ պետությունների փաստաբանների ինտեգրմանը,
- 12) քանի որ ծագման երկրում ընդունված մասնագիտական կոչումով՝ ընդունող անդամ պետությունում գրանցված փաստաբանը պետք է շարունակի գրանցված մնալ իր անդամ պետության իրավասու մարմնում, եթե նա պետք է պահպանի փաստաբանի իր կարգավիճակը, և նրա գործունեությունը կարգավորվի սույն Հրահանգով, և քանի որ այդ պատճառով իրավասու մարմինների միջև սերտ համագործակցությունը անխուսափելի է՝ մասնավորապես ցանկացած կարգապահական վարույթի հետ կապված,
- 13) քանի որ սույն Հրահանգով նախատեսված փաստաբանները՝ անկախ այն հանգամանքից՝ ծագման անդամ պետություններում ինքնազբաղված, թե վարձու աշխատողներ են, կարող են որպես վարձու փաստաբաններ գործունեություն իրականացնել ընդունող անդամ պետությունում, եթե այդ անդամ պետությունն այդ հնարավորությունն ընձեռում է իր իսկ փաստաբաններին,
- 14) քանի որ մեկ այլ անդամ պետությունում ծագման երկրի մասնագիտական կոչումով փաստաբաններին գործունեություն իրականացնելու հնարավորություն ընձեռելու սույն Հրահանգի նպատակը նաև վերջիններիս համար այդ ընդունող անդամ պետությունում համապատասխան մասնագիտական կոչում ձեռք բերելու գործընթացը հեշտացնելն է, և քանի որ համաձայն Պայմանագրի 48-րդ և 52-րդ հոդվածների, ինչպես մեկնաբանվել է արդարադատության դատարանի կողմից, ընդունող անդամ պետությունը պետք է հաշվի առնի իր տարածքում ձեռք բերված ցանկացած մասնագիտական փորձ, և քանի որ ընդունող անդամ պետությունում արդյունավետ և կանոնավոր կերպով երեք տարի շարունակ այդ պետության իրավունքի, այդ թվում՝

(1) ՊՏ, L 78, 26. 03. 1977թ., էջ 17: 1994 թվականի Անդամակցության մասին ակտով վերջին անգամ փոփոխված:

(2) [1988թ.] ECR II1123:

Համայնքի իրավունքի ոլորտում գործունեություն ծավալելուց հետո փաստաբանը կարող է բավականաչափ հմտություններ ձեռք բերել՝ ամբողջությամբ ինտեգրվելու համար ընդունող անդամ պետությունում իրավաբանի մասնագիտությանը, և քանի որ այդ ժամանակահատվածի վերջում, փաստաբանը, որը կարող է ստուգումով հաստատվող ապացույցներ ներկայացնել ընդունող անդամ պետությունում իր մասնագիտական իրազեկության վերաբերյալ, պետք է հնարավորություն ունենա ստանալու տվյալ անդամ պետության մասնագիտական կոչում, և քանի որ, եթե առնվազն երեք տարի տևողությամբ արդյունավետ և կանոնավոր մասնագիտական գործունեության ժամանակահատվածը ներառում է ընդունող անդամ պետության իրավունքի ոլորտում փորձի կարճատև ժամանակահատված, իրավասու մարմինը հաշվի է առնում այդ պետության իրավունքի մասին այլ գիտելիքներ, որոնք նա կարող է ստուգել հարցազրույցի միջոցով, և քանի որ, եթե այս պայմանների կատարման վերաբերյալ ապացույցներ ներկայացված չեն, այդ պայմանների հետ կապված՝ հեշտացնելուն ուղղված միջոցառումների շրջանակներում պետության մասնագիտական կոչումը չընդհանրվում է վերաբերյալ՝ ընդունող պետության իրավասու մարմնի կողմից ընդունված որոշումը պետք է հիմնավորվի և ենթակա լինի բողոքարկման ազգային իրավունքի համաձայն,

- 15) քանի որ տնտեսական և մասնագիտական պատճառներով Համայնքում փաստաբանների համատեղ գործելու հետզհետե աճող միտումը, այդ թվում՝ միությունների տեսքով, իրականություն է դարձել, և քանի որ այն փաստը, որ փաստաբաններն իրենց անդամ պետություններում անդամակցում են միավորումների, չպետք է օգտագործվի որպես պատճառ՝ կանխելու կամ հետ պահելու նրանց ընդունող անդամ պետությունում հիմնադրվելու հնարավորությունից, և քանի որ անդամ պետությունները պետք է թույլատրեն, այնուհանդերձ, համապատասխան միջոցների ձեռնարկումը մասնագիտության անկախության պաշտպանությունն օրինականացնելու նպատակով, և քանի որ որոշակի երաշխիքներ պետք է տրամադրվեն այն անդամ պետություններում, որոնք թույլ են տալիս համատեղ գործունեություն,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան, գործողության ոլորտը և հասկացությունները

1. Սույն Հրահանգի նպատակը որակավորման ստացման վայրի անդամ պետությունից բացի որևէ այլ անդամ պետությունում մշտական կարգով (ինքնազբաղված անձ կամ վարձու աշխատող) փաստաբանական գործունեության իրականացումը դուրսացնելն է:
2. Սույն Հրահանգի նպատակներով՝
 - ա) «փաստաբան» նշանակում է անձ, որն անդամ պետության քաղաքացի է և որը լիազորված է իրականացնել իր մասնագիտական գործունեությունը հետևյալ մասնագիտական կոչումներից մեկով՝

Բելգիա՝ Avocat/Advocaat/Rechtsanwalt

Բուլղարիա՝ Адвокат

Չեխիայի Հանրապետություն՝ Advokát

Դանիա՝ Advokat

Գերմանիա՝ Rechtsanwalt

Էստոնիա՝ Vandeadvokaat

Հունաստան՝ Δικηγόρος

Իսպանիա՝ Abogado/Advocat/Avogado/Abokatu

Ֆրանսիա՝ Avocat

Իռլանդիա՝ Barrister/Solicitor

Իտալիա՝ Avvocato

Կիպրոս՝ Δικηγόρος

Լատվիա՝ Zvērināts advokāts

Լիտվա՝ Advokatas

Լյուքսեմբուրգ՝ Avocat

Հունգարիա՝ Ügyvéd

Մալթա՝ Avukat/Prokuratur Legali

Նիդերլանդներ՝ Advocaat

Ավստրիա՝ Rechtsanwalt

Լեհաստան՝ Adwokat/Radca prawny

Պորտուգալիա՝ Advogado

Ռումինիա՝ Avocat

Սլովենիա՝ Odvetnik/Odvetnica

Սլովակիա՝ Advokát/Komerčný právnik

Ֆինլանդիա՝ Asianajaja/Advokat

Շվեդիա՝ Advokat

Միացյալ Թագավորություն՝

բ) «*ծագման անդամ պետություն*» նշանակում է անդամ պետություն, որտեղ փաստաբանը ձեռք է բերել (ա)–ում նշված մասնագիտության կոչումներից մեկի կիրառման իրավունքը՝ մինչև մեկ այլ անդամ պետությունում փաստաբանական գործունեություն իրականացնելը:

գ) «*ընդունող անդամ պետություն*» նշանակում է անդամ պետություն, որտեղ փաստաբանը սույն Հրահանգի համաձայն գործունեություն է իրականացնում:

դ) «*ծագման երկրի մասնագիտական կոչում*» նշանակում է այն անդամ պետությունում կիրառվող մասնագիտական կոչումը, որտեղ փաստաբանը ձեռք է բերել այդ կոչումը կիրառելու իրավունք՝ մինչև ընդունող անդամ պետությունում փաստաբանական գործունեություն իրականացնելը:

ե) «*միավորում*» նշանակում է ցանկացած սուբյեկտ, իրավաբանական անձի կարգավիճակով կամ առանց դրա, որը ձևավորվել է անդամ պետության իրավունքի համաձայն, որտեղ փաստաբանները ընդհանուր անվան ներքո իրականացնում են իրենց համատեղ մասնագիտական գործունեությունը:

զ) «*համապատասխան մասնագիտական կոչում*» կամ «*համապատասխան մասնագիտություն*» նշանակում է այն իրավասու մարմնի կողմից կարգավորվող մասնագիտական կոչումը կամ մասնագիտությունը, որտեղ փաստաբանը գրանցվել է 3-րդ հոդվածի համաձայն, իսկ «*իրավասու մարմին*» նշանակում է այդ մարմինը:

3. Սույն Հրահանգը կիրառվում է, հավասարապես, իրենց ծագման անդամ պետությունում և, 8–րդ հոդվածի դրույթների պահպանմամբ, ընդունող անդամ պետությունում այն փաստաբանների նկատմամբ, ովքեր ինքնագրադրված են, ինչպես նաև՝ այն փաստաբանների, ովքեր գործում են որպես վարձատրվող աշխատողներ:

4. Սույն Հրահանգի իմաստով փաստաբանական գործունեության իրականացումը չի ներառում այն ծառայությունների մատուցումը, որը կարգավորվում է թիվ 77/249/ԵՏՀ հրահանգով:

Հոդված 2

Ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնելու իրավունքը

Յուրաքանչյուր փաստաբան իրավունք ունի մշտական հիմունքներով իր ծագման երկրի մասնագիտական կոչումով ցանկացած այլ անդամ պետությունում իրականացնել 5-րդ հոդվածով նախատեսված գործունեությունը:

Ընդունող անդամ պետությունում փաստաբանությանն ինտեգրվելը կարգավորվում է 10-րդ հոդվածով:

Հոդված 3

Իրավասու մարմնում գրանցումը

1. Այն փաստաբանը, որը ցանկանում է գործունեություն իրականացնել իր մասնագիտական որակավորումը ստանալու պետությունից բացի այլ անդամ պետությունում, պետք է գրանցվի տվյալ պետության իրավասու մարմնում:

2. Ընդունող անդամ պետության իրավասու մարմինը գրանցում է փաստաբանին ծագման անդամ պետության իրավասու մարմնի կողմից տրամադրված՝ իր գրանցումը հաստատող վկայականը ներկայացնելուց հետո: Այն կարող է պահանջել, որպեսզի ծագման անդամ պետության իրավասու մարմնի կողմից ներկայացված վկայականը չլինի երեքից ավելի ամիս վաղեմության: Այն տեղեկացնում է ծագման անդամ պետության իրավասու մարմնին գրանցման մասին:

3. Առաջին պարբերության կիրառման նպատակով՝

— Միացյալ Թագավորությունում և Իռլանդիայում. կիրառվող մասնագիտական կոչումներից բացի այլ կոչումներով գործունեություն իրականացնող փաստաբանները Միացյալ Թագավորությունում և Իռլանդիայում գրանցվում են դատական փաստաբանի կամ փաստաբանի մասնագիտության համար պատասխանատու մարմնում, կամ իրավախորհրդատուի մասնագիտության համար պատասխանատու մարմնում:

— Միացյալ Թագավորությունում. Իռլանդիայից դատական փաստաբանի համար պատասխանատու մարմինը դատական փաստաբանի կամ փաստաբանի մասնագիտության համար պատասխանատու մարմինն է, իսկ Իռլանդիայից իրավախորհրդատուի համար՝ իրավախորհրդատուի մասնագիտության համար պատասխանատու մարմինը:

— Իռլանդիայում. Միացյալ Թագավորությունից դատական փաստաբանի կամ փաստաբանի համար պատասխանատու մարմինը դատական փաստաբանի մասնագիտության համար պատասխանատու մարմինն է, իսկ Միացյալ Թագավորությունից իրավախորհրդատուի համար՝ իրավախորհրդատուի մասնագիտության համար պատասխանատու մարմինը:

4. Եթե ընդունող անդամ պետությունում համապատասխան իրավասու մարմինը հրապարակում է իր մոտ գրանցված փաստաբանների անունները, այն նաև հրապարակում է սույն Հրահանգի համաձայն գրանցված փաստաբանների անունները:

Հոդված 4

Ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնելը

1. Ընդունող անդամ պետությունում ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանն այդ աշխատանքները կատարում է այդ կոչման համաձայն, որը պետք է արտահայտվի ծագման անդամ պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից մեկով՝ դյուրըմբռնելի ձևով և այնպես, որպեսզի շփոթություն չառաջանա ընդունող անդամ պետության մասնագիտական կոչման հետ:

2. Առաջին պարբերության կիրառման նպատակով ընդունող անդամ պետությունը կարող է ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանից պահանջել նշել այն մասնագիտական մարմինը, որի անդամն է նա հանդիսանում ծագման երկրում կամ այն դատական մարմինը, որտեղ նա իրավունք ունի գործունեություն իրականացնել իր ծագման անդամ պետության օրենքների համաձայն: Ընդունող անդամ պետությունը կարող է նաև պահանջել ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող

փաստաբանին ներկայացնել ծագման պետության իրավասու մարմնում իր գրանցման մասին տեղեկանք:

Հոդված 5

Գործունեության ոլորտը

1. 2-րդ և 3-րդ պարբերությունների դրույթների պահպանմամբ՝ ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանը միևնույն մասնագիտական գործունեությունն է իրականացնում, ինչ ընդունող անդամ պետությունում կիրառվող համապատասխան մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանը և, մասնավորապես, կարող է խորհրդատվություն տրամադրել իր ծագման անդամ պետության իրավունքի, Համայնքի իրավունքի, միջազգային իրավունքի և ընդունող անդամ պետության իրավունքի շուրջ: Նա, ամեն դեպքում, հետևում է ազգային դատարաններում կիրառվող ընթացակարգային կանոններին:

2. Անդամ պետությունները, որոնք թույլատրում են իրենց տարածքում նշված կատեգորիայի փաստաբաններին փաստաթղթեր պատրաստել մահացած անձանց գույքի կառավարիչ դառնալու և հողամասի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելու և փոխանցելու համար, որոնց կատարումը այլ անդամ պետություններում նախատեսված է փաստաբանի մասնագիտությունից բացի այլ մասնագիտությունների համար, կարող են այդ անդամ պետություններից մեկում իր ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբաններին նման գործունեություն իրականացնելու թույլտվություն չտալ:

3. Դատական վարույթներում հաճախորդին ներկայացնելու կամ վերջինիս պաշտպանելու հետ կապված գործունեություն իրականացնելու համար, և այնքանով ընդունող անդամ պետությունների իրավունքով նման գործունեության իրականացումը նախատեսված է միայն այդ անդամ պետության մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանների համար, այդ անդամ պետությունը կարող է պահանջել, որպեսզի ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանները համատեղ աշխատեն այնպիսի փաստաբանի հետ, որը գործունեություն է իրականացնում նշված դատական մարմնում և որը, անհրաժեշտության դեպքում, հաշվետու կլինի այդ մարմնին, կամ աշխատեն այդ մարմնում գործունեություն իրականացնող ‘avoué’-ի հետ:

Այնուհանդերձ, արդարադատության համակարգի անխափան գործունեությունն ապահովելու համար, անդամ պետությունները կարող են սահմանել հատուկ կանոններ վերին ատյանի դատարաններից օգտվելու համար, ինչպես օրինակ՝ մասնագիտացած փաստաբանների ծառայություններից օգտվելը:

Հոդված 6

Մասնագիտական վարքագծի կիրառվող կանոնները

1. Անկախ մասնագիտական վարքագծի կանոններից, որոնց նա ենթարկվում է ծագման անդամ պետությունում, ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանը ենթարկվում է մասնագիտական վարքագծի միևնույն կանոններին, ինչ ընդունող անդամ պետության համապատասխան մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանը՝ այդ անդամ պետության տարածքում իրականացվող ամբողջ գործունեության համար:

2. Ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբաններին թույլատրվում է համապատասխան ներկայացուցչություն ունենալ ընդունող անդամ պետությունների մասնագիտական միություններում: Նման ներկայացուցչությունը ներառում է առնվազն ձայնի իրավունք միությունների ղեկավար մարմինների ընտրությունների ժամանակ:

3. Ընդունող անդամ պետությունը կարող է պահանջել ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանից ունենալ մասնագիտական փոխհատուցման ապահովագրություն կամ դառնալ մասնագիտական երաշխիքային հիմնադրամի անդամ՝ այն կանոնների համաձայն, որ տվյալ պետությունը սահմանում է իր տարածքում

իրականացվող մասնագիտական գործունեության համար: Այնուհանդերձ, ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանը ազատվում է այդ պահանջից, եթե նա կարող է ապացուցել, որ ապահովագրված կամ երաշխավորված է ծագման անդամ պետության կանոնների համաձայն այնքանով, որքանով այդ ապահովագրությունը կամ երաշխիքը համարժեք է՝ ապահովագրության պայմանների և չափի տեսանկյունից: Եթե առկա է մասնակի համարժեքություն, ապա ընդունող անդամ պետության իրավասու մարմինը կարող է պահանջել հավելյալ ապահովագրում կամ հավելյալ երաշխիքի տրամադրում՝ ծածկելու համար այն տարրերը, որոնք դեռևս նախատեսված չեն այն ապահովագրությամբ կամ երաշխիքով, որը տրամադրվել է ծագող անդամ պետության կանոնների համաձայն:

Հոդված 7

Կարգապահական վարույթները

1. Իր ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանի կողմից՝ ընդունող անդամ պետությունում ուժի մեջ գտնվող պարտավորությունները չկատարելու դեպքում կիրառվում են ընդունող անդամ պետությունում նախատեսված ընթացակարգային կանոնները, տույժերը և իրավական պաշտպանության միջոցները:

2. Մինչև ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը, ընդունող անդամ պետության իրավասու մարմինը այդ մասին հնարավորինս շուտ տեղեկացնում է ծագման անդամ պետության իրավասու մարմնին՝ տրամադրելով նրան համապատասխան ամբողջ տեղեկատվությունը:

Առաջին ենթապարբերությունը կիրառվում է համապատասխան փոփոխություններով, երբ կարգապահական վարույթը հարուցվել է ծագման անդամ պետության իրավասու մարմնի կողմից, որը համապատասխանաբար տեղեկացնում է ընդունող անդամ պետության իրավասու մարմնին:

3. Չսահմանափակելով ընդունող անդամ պետության իրավասու մարմնի որոշումներ կայացնելու իրավունքը՝ այդ մարմինը կարգապահական վարույթի ընթացքում համագործակցում է ծագման անդամ պետության իրավասու մարմնի հետ: Մասնավորապես, ընդունող անդամ պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու, որպեսզի ծագման անդամ պետության իրավասու մարմինը կարողանա փաստարկներ ներկայացնել ցանկացած բողոքարկում քննարկելու համար իրավասու մարմիններին:

4. Ծագման անդամ պետության իրավասու մարմինը որոշում է, թե ինչ գործողություն ձեռնարկի իր ընթացակարգային և նյութաիրավական նորմերի շրջանակներում՝ իր ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանի վերաբերյալ ընդունող անդամ պետության իրավասու մարմնի ընդունած որոշման հիման վրա:

5. Ծագման անդամ պետությունում իրավասու մարմնի կողմից՝ մասնագիտական գործունեություն իրականացնելու թույլտվության ժամանակավոր կամ մշտական դադարեցումը ինքնաբերաբար հանգեցնում է ծագման անդամ պետության մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանին ընդունող անդամ պետությունում գործունեության իրականացնելու իրավունքից ժամանակավոր կամ մշտական զրկելուն, չնայած որ դա ընդունող անդամ պետության իրավասու մարմնի որոշման համար նախապայման չէ:

Հոդված 8

Վարձու աշխատանքը

Ծագման երկրի մասնագիտական կոչումով՝ ընդունող անդամ պետությունում գրանցված փաստաբանը կարող է վարձու աշխատանք կատարել մեկ այլ փաստաբանի մոտ, փաստաբանների միությունում կամ ֆիրմայում, կամ էլ պետական կամ մասնավոր ձեռնարկությունում, եթե տվյալ ընդունող անդամ պետությունը թույլատրում է նման աշխատանք կատարել այդ պետությունում կիրառվող մասնագիտական կոչումով գրանցված փաստաբաններին:

Հոդված 9

Հիմնավորումների շարադրանքը և իրավական պաշտպանության միջոցները

3-րդ հոդվածում նշված գրանցումը գործողության մեջ չդնելու կամ վերջինիս գործողությունը դադարեցնելու, ինչպես նաև կարգապահական միջոցներ սահմանելու մասին որոշումների դեպքում շարադրվում են դրանց հիմնավորումները:

Նման որոշումների դեմ կիրառվում են իրավական պաշտպանության միջոցներ դատարանում կամ տրիբունալում՝ ներպետական իրավունքի դրույթների համաձայն:

Հոդված 10

Ընդունող անդամ պետության փաստաբանին համարժեք մոտեցումը

1. Ծագման երկրի մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբանը, որն ընդունող անդամ պետությունում առնվազն երեք տարի արդյունավետ և կանոնավոր կերպով գործունեություն է իրականացրել այդ պետության իրավունքի, ներառյալ Համայնքի իրավունքի ոլորտում՝ նպատակ ունենալով ստանալ ընդունող անդամ պետությունում փաստաբանական գործունեությամբ զբաղվելու թույլտվություն, կարող է ազատվել թիվ 89/48/ԵՏՀ հրահանգի հոդված 4(1)(բ)-ով սահմանված պայմանների կատարման պարտավորությունից. «Արդյունավետ ու կանոնավոր կերպով իրականացում» նշանակում է գործունեության փաստացի իրականացում առանց ընդհատումների՝ բացառությամբ առօրյա կյանքում տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով առաջացող ընդհատումների:

Տվյալ փաստաբանի խնդիրն է ընդունող անդամ պետության իրավասու մարմնին ապացույցներ ներկայացնել առ այն, որ նա առնվազն երեք տարի արդյունավետ և կանոնավոր կերպով գործունեություն է իրականացրել ընդունող անդամ պետության իրավունքի շրջանակներում: Այդ նպատակով՝

- ա) փաստաբանն ընդունող անդամ պետության իրավասու մարմնին տրամադրում է համապատասխան տեղեկություններ և փաստաթղթեր, մասնավորապես, իր վարած գործերի թվի և դրանց բնույթի վերաբերյալ.
- բ) ընդունող անդամ պետության իրավասու մարմինը կարող է ստուգել իրականացված գործունեության արդյունավետ և կանոնավոր բնույթը և, անհրաժեշտության դեպքում, պահանջել, որպեսզի փաստաբանը բանավոր կամ գրավոր ձևով պարզաբանի կամ մանրամասնի (ա) կետում նշված տեղեկությունները և փաստաթղթերը:

Ընդունող անդամ պետության իրավասու մարմին՝ բացառություն չկատարելու մասին որոշումը պետք է հիմնավորվի, եթե ապացույց չի ներկայացվում, որ առաջին ենթապարբերությամբ սահմանված պահանջները կատարվել են. որոշումը ենթակա է բողոքարկման ներպետական իրավունքի համաձայն:

2. Ծագման երկրի մասնագիտական կոչումով՝ ընդունող անդամ պետությունում գործունեություն իրականացնող փաստաբանը ցանկացած պահի կարող է թիվ 89/48/ԵՏՀ հրահանգի համաձայն դիմել իր դիպլոմի ճանաչման համար՝ նպատակ ունենալով փաստաբանական գործունեությամբ զբաղվելու թույլտվություն ստանալ ընդունող անդամ պետությունում և այդ գործունեությունն իրականացնել այդ անդամ պետությունում՝ տվյալ մասնագիտությանը համապատասխանող կոչման ներքո:

3. Ծագման երկրի մասնագիտական կոչումով՝ ընդունող անդամ պետությունում առնվազն երեք տարի արդյունավետ և կանոնավոր կերպով մասնագիտական գործունեություն իրականացրած, սակայն անդամ պետության իրավունքի ոլորտում այդ ժամանակահատվածից պակաս մասնագիտական գործունեություն իրականացնող փաստաբանը կարող է ընդունող անդամ պետության իրավասու մարմնից ստանալ այդ պետությունում փաստաբանական գործունեությամբ զբաղվելու թույլտվություն և այդ պետությունում ընդունված մասնագիտության անվանման ներքո նման գործունեություն իրականացնելու իրավունք՝ պարտավորություն չունենալով կատարելու թիվ 89/48/ԵՏՀ հրահանգի հոդված 4(1)(բ)-ում նշված պայմանները՝ ստորև նշված պայմաններին և ընթացակարգերին համապատասխան:

- ա) ընդունող անդամ պետության իրավասու մարմինը հաշվի է առնում վերը նշված ժամանակահատվածում արդյունավետ և կանոնավոր կերպով իրականացվող մասնագիտական գործունեությունը, ընդունող անդամ պետության իրավունքի իմացությունը և այդ ոլորտում մասնագիտական փորձը, ինչպես նաև ընդունող անդամ պետության իրավունքի, այդ թվում՝ մասնագիտական գործունեությունը և վարքագիծը կարգավորող կանոնների վերաբերյալ դասախոսությունների կամ սեմինարների հաճախելը:
- բ) փաստաբանն ընդունող անդամ պետության իրավասու մարմնին տրամադրում է համապատասխան տեղեկություններ և փաստաթղթեր, մասնավորապես, իր վարած գործերի վերաբերյալ: Ընդունող անդամ պետությունում փաստաբանի արդյունավետ ու կանոնավոր գործունեության և այդ գործունեությունը շարունակելու նրա կարողության գնահատումը կատարվում է ընդունող անդամ պետության իրավասու մարմնի հետ հարցազրույցի միջոցով՝ իրականացված գործունեության կանոնավոր և արդյունավետ բնույթը ստուգելու նպատակով:

Ընդունող անդամ պետության իրավասու մարմնի՝ թույլտվություն չտալու մասին որոշումը պետք է հիմնավորվի, եթե ապացույց չի ներկայացվում, որ առաջին ենթապարբերությամբ սահմանված պահանջները կատարվել են. որոշումը ենթակա է բողոքարկման ներպետական իրավունքի համաձայն:

4. Ընդունող անդամ պետության իրավասու մարմինը կարող է ներպետական իրավունքով բողոքարկման ենթակա հիմնավորված որոշմամբ մերժել փաստաբանին սույն հոդվածի դրույթներով սահմանված արտոնությունից օգտվելու թույլտվության տրամադրումը, եթե գտնում է, որ դա հակասում է հանրային կարգին, մասնավորապես կարգապահական վարույթների, բողոքների կամ ցանկացած այլ դեպքերում:

5. Իրավասու մարմնի ներկայացուցիչները, որոնց վերապահված է դիմումի ուսումնասիրումը, ապահովում են ստացված տեղեկությունների գաղտնիությունը:

6. Փաստաբանը, որն ընդունող անդամ պետությունում 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններին համապատասխան փաստաբանական գործունեություն իրականացնելու թույլտվություն է ստանում, իրավունք ունի օգտագործելու ծագման անդամ պետությունում ընդունված իր մասնագիտական կոչումը՝ այդ երկրի պաշտոնական լեզվով կամ լեզուներից մեկով արտահայտված՝ ընդունող անդամ պետությունում փաստաբանի համապատասխան մասնագիտական կոչմանը զուգահեռ:

Հոդված 11

Համատեղ գործունեությունը

Եթե ընդունող անդամ պետությունում մասնագիտական համապատասխան կոչումով իրենց գործունեությունն իրականացնող փաստաբաններին թույլատրվում է համատեղ գործունեություն ծավալել, ապա ստորև շարադրված դրույթները կիրառվում են այն փաստաբանների նկատմամբ, որոնք ցանկանում են գործունեություն իրականացնել այդ կոչման ներքո կամ գրանցվել իրավասու մարմնում՝

1) մեկ կամ ավելի փաստաբաններ, ովքեր ընդգրկված են միևնույն միավորման մեջ իրենց ծագման անդամ պետությունում և, ովքեր ընդունող անդամ պետությունում գործունեություն են իրականացնում ծագման երկրի մասնագիտական կոչումով, ընդունող անդամ պետությունում կարող են շարունակել իրենց մասնագիտական գործունեությունը իրենց միավորման մասնաճյուղում կամ գործակալությունում: Այնուհանդերձ, եթե ծագման անդամ պետությունում տվյալ խմբի գործունեությունը կարգավորող հիմնական կանոնները հակասում են ընդունող անդամ պետության իրավունքով, կանոնակարգով կամ վարչական ակտով սահմանված հիմնական կանոններին, ապա գերակայում են ընդունող անդամ պետության կանոնները՝ այնքանով, որքանով դրանց հետ համապատասխանությունը հիմնավորված է հանրային շահով՝ վստահորդներին և երրորդ կողմերին պաշտպանության գործում:

2) Յուրաքանչյուր անդամ պետություն թույլ է տալիս միևնույն միավորումից կամ ծագման միևնույն անդամ պետությունից երկու կամ ավելի փաստաբանների, որոնք այդ երկրի տարածքում

գործունեություն են իրականացնում ծագման երկրի մասնագիտական կոչումով, որն է տեսակի համատեղ գործունեություն իրականացնել: Եթե ընդունող անդամ պետությունն իր փաստաբաններին տալիս է համատեղ գործունեություն իրականացնելու մի քանի տեսակներից ընտրություն կատարելու հնարավորություն, ապա այդ նույն տեսակները պետք է մատչելի լինեն նաև վերը նշված փաստաբաններին: Ընդունող անդամ պետությունում այդ փաստաբանների կողմից իրականացվող համատեղ գործունեություն իրականացնելու կարգը կարգավորվում է տվյալ պետության իրավական ակտերով, կանոնակարգերով և վարչական ակտերով:

3) Ընդունող անդամ պետությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ համատեղ գործունեություն իրականացնելու թույլտվություն տալու նաև հետևյալ անձանց՝

ա) տարբեր անդամ պետություններից մի քանի փաստաբանների, որոնք գործունեություն են իրականացնում իրենց ծագման երկրի մասնագիտական կոչումներով:

բ) (ա) կետում նշված մեկ կամ մի քանի փաստաբանների և ընդունող անդամ պետությունից մեկ կամ մի քանի փաստաբանների:

Ընդունող անդամ պետությունում այդ փաստաբանների կողմից համատեղ գործունեություն իրականացնելու կարգը կարգավորվում է տվյալ պետության իրավական ակտերով, կանոնակարգերով և վարչական ակտերով:

(4) Փաստաբանը, որը ցանկություն է հայտնում գործունեություն իրականացնել իր ծագման երկրի մասնագիտական կոչումով, ընդունող անդամ պետության իրավասու մարմնին տեղեկացնում է այն փաստի մասին, որ նա միավորման անդամ է իր ծագման անդամ պետությունում և տրամադրում է համապատասխան տեղեկություններ այդ միավորման վերաբերյալ:

(5) Չնայած 1-4-րդ կետերից՝ ընդունող անդամ պետությունը, այնքանով, որքանով այն արգելում է համապատասխան մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնող փաստաբաններին փաստաբանական գործունեություն իրականացնել այնպիսի միավորման մեջ, որում որոշ անձինք չունեն այդ մասնագիտացումը, կարող է մերժել ծագման երկրի մասնագիտական կոչումով փաստաբանին իր կարգավիճակում այդ անդամ պետության տարածքում գործունեություն իրականացնել որպես իր միավորման անդամ: Միավորումը կարող է ներառել անձանց, որոնք չունեն այդ մասնագիտացումը, եթե՝

— միավորման կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է.

— անվանումը, որի ներքո այն գործունեություն է իրականացնում, գործածվում է կամ

— այդ միավորման մեջ որոշումներ կայացնելու իրավունքն իրականացվում է *դե ֆակտո* կամ *դե յուրե*

այն անձանց կողմից, որոնք չունեն փաստաբանի կարգավիճակ՝ հոդված 1(2)-ի իմաստով:

Եթե ծագման անդամ պետությունում փաստաբանների միավորման գործունեությունը կարգավորող հիմնական կանոնները հակասում են ընդունող անդամ պետության կանոններին կամ առաջին ենթապարբերության դրույթներին, ապա ընդունող անդամ պետությունը կարող է չհամաձայնել իր տարածքում մասնաձյուղ կամ գործակալություն հիմնելուն՝ առանց 1-ին կետով սահմանված սահմանափակումների:

Հոդված 12

Միավորման անվանումը

Անկախ իրենց ծագման երկրում ընդունված մասնագիտական կոչումներով՝ ընդունող անդամ պետությունում փաստաբանների կողմից գործունեության իրականացման կարգից, նրանք կարող են գործածել միավորման ցանկացած անվանում, որում նրանք ընդգրկված են անդամ պետությունում:

Ընդունող անդամ պետությունը կարող է պահանջել, որպեսզի առաջին ենթապարբերությունում նշված անվանումից բացի նշվեն նաև ծագման անդամ պետությունում գործող միավորման իրավական ձևը և (կամ) ընդունող անդամ պետությունում գործունեություն իրականացնող միավորման անդամների անունները:

Հոդված 13

Համագործակցությունը ծագման և ընդունող անդամ պետությունների իրավասու մարմինների միջև և գաղտնիությունը

Սույն Հրահանգի կիրառմանը նպաստելու և ընդունող անդամ պետությունում կիրառվող կանոնները շրջանցելու միակ նպատակով դրա դրույթների չարաշահումը կանխելու համար ընդունող անդամ պետության և ծագման անդամ պետության իրավասու մարմինները սերտորեն համագործակցում են և միմյանց տրամադրում փոխադարձ աջակցություն:

Նրանք ապահովում են փոխանակված տեղեկությունների գաղտնիությունը:

Հոդված 14

Իրավասու մարմինների նշանակումը

Մինչև 2000 թվականի մարտի 14-ը անդամ պետությունները նշանակում են իրավասու մարմիններ, որոնք լիազորված են սույն Հրահանգում նշված դիմումներն ստանալու և որոշումները կայացնելու համար:

Նրանք հաղորդում են այս տեղեկություններն մյուս անդամ պետություններին և Հանձնաժողովին:

Հոդված 15

Հանձնաժողովի կողմից ներկայացվող հաշվետվությունը

Սույն Հրահանգն ուժի մեջ մտնելու պահից ամենաուշը տասը տարի հետո Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին և Խորհրդին է ներկայացնում Հրահանգի իրականացման առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն:

Բոլոր անհրաժեշտ խորհրդակցություններից հետո այն պետք է այդ կապակցությամբ ներկայացնի իր եզրակացությունները և ցանկացած փոփոխություն, որ կարելի է կատարել գործող համակարգում:

Հոդված 16

Կիրառումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը մինչև 2000 թվականի մարտի 4-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները հաստատվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ներպետական իրավունքի հիմնական ակտերի տեքստերը, որոնք ընդունվում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 17

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելու օրվանից:

Հոդված 18

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին: